ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

«12» հոկտեմբեր 2021թ. № 02/03.5/3565-2021

Դավիթ Հովհաննիսյան Հովհաննեսի ԱՁ-ին
ք. Երևան, Կոմիտասի պող. 56-46
Hovhannisyan8118@gmail.com

Հարգելի՛ պարոն Հովհաննիսյան,

Հայտնում ենք Ձեզ, որ Արտակարգ իրավիճակների նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) և Դավիթ Հովհաննիսյան Հովհաննեսի ԱՁ-ի միջև 06.05.2021թ-ին կնքված թիվ ԳՀԱՊՁԲ-ԱԻՆ-21/45 ծածկագրով պայմանագրի շրջանակներում մատակարարված ապրանքը չի համապատասխանում տեխնիկական բնութագրով սահմանված պահանջներին: Համաձայն պայմանագրի 2.1.2 կետի «բ» ենթակետի՝ 21.05.2021 թվականին սահմանվել է ողջամիտ ժամկետ (30 օրացուցային օր) ապրանքը փոխարինելու համար, ինչը սահմանված ժամկետում չի փոխարինվել:

Ելնելով վերոգրյալից, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ-ի մայիսի 4-ի N526-Ն որոշման N 1 հավելվածի 33-րդ կետի 17-րդ ենթակետը և Պայմանագրի 8.11-րդ կետը՝ Նախարարությունը միակողմանի լուծում է ԳՀԱՊՁԲ-ԱԻՆ-21/45 ծածկագրով Պայմանագիրը:

Կատարողի կողմից, որպես պայմանագրային պարտավորությունների պատշաճ կատարման ապահովում ներկայացրած որակավորման և պայմանագրի ապահովումները (տուժանքի մասին համաձայնագրեր՝ Հավելված 4.1 և Հավելված 5.1), համաձայն որակավորման ապահովման 1.4 կետի և պայմանագրի ապահովման 1.6 կետի, կից վճարման պահանջագրերի հետ միասին, սահմանված կարգով,

կներկայացվի «ԱյԴի Բանկ» ՓԲԸ ՀՀ ՖՆ գործառնական վարչության N900008000698 հաշվեհամարին փոխանցելու նպատակով:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն գնումների ընթացակարգերին մասնակվելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով Դավիթ Հովհաննիսյան Հովհաննեսի ԱՁ-ի տվյալները ներկայացվելու են լիազոր պետական մարմին:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ Պայմանագիրը կհամարվի միակողմանի լուծված՝ սույն ծանուցումը Պատվիրատուի կողմից տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

Հարգանքով՝

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԿԱՏԱՐՈՂ

Invalid signature

X

ՎԱՀԱԳՆ ՕՀԱՆՅԱՆ

Signed by: GRIGORYAN ARMENUHI 7307570114 Ա.ԳՐԻԳՈՐՅԱՆ

Կատարող՝ Ֆինանսատնտեսագիտական վարչության
գնումների կազմակերպման բաժին
Հեռ՝. 012 31 77 22